

Հրատարակչատան կողմէ

«Դուն աղա ես աղա մեր ալիւրը ղ՛վ աղայ» գիրքին մաս կազմող գրութիւնները առաջին անգամ տպագրուած են «Մարմարա» օրաթերթին մէջ, 1994-1995 թուականներուն, Ռոպէր Հատտէճեանի «Յուշատետր» սինակին վրայ, «Հայկական առաձներու ներշնչումով» խորագրով: Համանուն գիրքը նախքան 1995-ին Պոլսոյ մէջ տպագրուիլը, նախ հրատարակուած է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան տպարանէն՝ Գարեգին Բ. կաթողիկոսի փափաքով: 1998-ին գիրքին պարունակութիւնը տեղ գտած է Գարեգին Ա. կաթողիկոսի փափաքով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ հրատարակուած Ռոպէր Հատտէճեանի «Յուշատետր հատընտիր» հատորին մէջ: «Յուշատետր» շարքի 26-րդ հատորի մէկ ընտրանին է այս հատորը, որ հասցէագրուած է պատանի ու երիտասարդ ընթերցողներուն:

Հրատարակութեան ու խմբագրութեան վերաբերեալ

ԴՈՒՆ ԱՂԱ ԵՍ ԱՂԱ
ՄԵՐ ԱԼԻԻՐԸ Ո՞Վ ԱՂԱՅ

Արաս Հրատարակչություն
A r a s Y a y ı n c ı l ı k
İstiklal Caddesi, Hıdivyal Palas 231/Kat 1
34070 Tünel, Beyoğlu-İstanbul
Tel: (0212) 243 06 02
www.arasyayincilik.com
info@arasyayincilik.com
Sertifika No: 44967

ARAS - ԱՐԱՍ 203

**ԴՈՒՆ ԱՂԱ ԵՍ ԱՂԱ
ՄԵՐ ԱԼԻԻՐԸ Ո՞Վ ԱՂԱՅ
ՌՈՊԵՐ ՀԱՏՏԵՃԵԱՆ**

Կողքը պատրաստեց՝
Արէտ Կըճըր

Տպագրություն
Սենա Օֆսեթ

Ա տպագրություն Դեկտեմբեր 2017, Իսթանպուլ
Բ տպագրություն Յունուար 2026, Իսթանպուլ


ISBN 9786052100134

ԴՈՒՆ ԱՂԱ ԵՍ ԱՂԱ ՄԵՐ ԱԼԻՒՐԸ Ո՞Վ ԱՂԱՅ

ՌՈՊԵՐ ՀԱՏՏԵՃԵԱՆ

Նկարագարդեց՝ Սարգիս Փաշաճը





Լուսանկար՝ Արա Կիլիեր
© Ara Güler / Ara Güler Müzesi

ՌՈՊԵՐ ՀԱՏԵՃԵԱՆ

ՌՈՊԵՐ ՀԱՏՏԷՃԵԱՆ

Ռոպեր Հատտեճեան ծնած է 1926-ին Ստանպուլի Պաքըրգիւ թաղը, որպէս զաւակը Աւետիս ու Սիրանոյշ Հատտեճեան ամուլին: 1944-ին աւարտած է Փանկալթըի Մխիթարեան վարժարանը: Տարի մը ուսանած է Ստանպուլի համալսարանի ֆիզիք-մաթեմաթիքի ճիւղին մէջ, ապա անցած է գրականութեան ֆաքիւլթէ, որու փիլիսոփայա-հոգեբանութեան ճիւղը աւարտած է 1950-ին: Զինուորական ծառայութիւնը որպէս պահեստի սպայ կատարած է Անքարայի ու Ադրըի մէջ: Ամուսնացած է Սիւզան Դամիկեանի հետ եւ սկսած է աշխատիլ հիւսուածեղէնի գործարանի մը մէջ:

Դպրոցական վաղ տարիներէն սկսեալ հակում ցուցաբերած է գրականութեան նկատմամբ, գրած է թրքերէն բանաստեղծութիւններ, պատմուածքներ ու վէպեր: 1946-ին Խաչիկ Ամիրեանի ու Վարուժան Աճէմեանի քաջալերութեամբ սկսած է հայերէն գրել: Իր առաջին պատմուածքը՝ «Բառասխալ»ը, հրատարակուած է «Անի» ամսագիրին մէջ: Ապա Ռ. Հատտեճեան ինքզինք բոլորովին նուիրած է հայալեզու գրականութեան՝ պատմուածքներ, արձակ քերթուածներ հրատարակելով «Սան», «Ճառագայթ» պարբերա-

կաններուն մէջ: Աւելի վերջ բանաստեղծներ Զահրատի, Զարեհ Խրախունիի ու արձակագիր Վարուժան Աճէմեանի հետ «Մարմարա»ի մէջ հիմնած է գրական էջերու բաժին մը, որ կը շարունակուի մինչեւ այսօր:

Հատուկն 1967-ին ստանձնեց «Մարմարա» թերթի ամբողջական պատասխանատուութիւնը՝ նոր գոյն ու ճաշակ մը բերելով թերթին: Հատուկն թերթին շուրջ համախմբեց իսթանպուլահայ գրողներ՝ թերթին սինակները լայն բանալով գրական-մշակութային գործերուն առջեւ:

1960-ին ուշադրութիւն գրաւեց իր «Կեանքի մը երեք կիրակիները» թատերախաղով: Հետզհետէ հրատարակեց գրական տարբեր սեռերու պատկանող այլ գործեր եւս, ինչպէս՝ «Յակոբ Պարոնեանի մտերմութեան մէջ», «Բառասխալ», «Կիրակնօրեայ հաշուեփակ», «Օրագրիս տասնըհինգ էջերը», «Մարդոց մեծութեան ու խեղճութեան մասին»: 1983-ին հրատարակուեցաւ «Առաստաղ» վէպը: 1981-ին ալ սկսաւ «Մարմարա»ի մէջ հրատարակել իր առօրեայ սինակի յօդուածները, «Յուշատետր» անուան տակ, որոնք գիրքի ձեւով կը հրատարակուին պարբերաբար:

1986-ին արժանացաւ այդ թուականին Հայկական բարեգործական ընդհանուր միութեան կողմէ հաստատուած «Ռիթա ու Վարդգէս Պալեան» հայ մամուլի մրցանակին: Նոյն տարին Մխիթարեան սանուց միութեան մէջ տօնուեցաւ իր գրական գործունէութեան քառասնամեակը, որու առիթով հրատարակուեցաւ յուշամատեն մը՝ Մաքրուիի Պ. Յակոբեանի խմբագրութեամբ: Գրականագէտ Սուրէն Դանիէլեան եւս գրական վերլուծութեան ենթարկած է Հատուկնի

ստեղծագործությունը՝ «Ռ. Հատտեճեան, ներաշխարհի գեղարուեստական քննութիւն» հատորին մէջ:

Վազգէն Ա. Կաթողիկոսի օրով արժանացաւ Մայր Աթոռի «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանին: 2001-ին Ռուպէր Հատտեճեան, իր գրչեղբայրներուն՝ Զահրատի, Զարեհ Խրախունիի եւ տոքթ. Վարդ Շիկահերի հետ, արժանացաւ Պոլսոյ հայոց պատրիարքութեան Ա. կարգի շքանշանին եւ օրհնութեան կոնդակին: 2002-ին ստացաւ Հայաստանի կառավարութեան «Մովսէս Խորենացի» շքանշանը, որ Պոլսոյ մէջ իրեն յանձնուեցաւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի ձեռամբ: 2011-ին, Հայաստանի անկախութեան քսանամեակին առիթով պարգեւատրուեցաւ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

Հատտեճեան մահացաւ 6 Սեպտեմբեր 2025-ին ու թաղուեցաւ Շիշլիի ազգային գերեզմանատան մտաւորականաց թաղը:

Դուրսը քահանայ ներսը սատանայ



Երիտասարդութեանս շրջանին Ռաֆֆիին վէպերէն մէկուն մէջ հանդիպած էի ասութեան մը, որ խորապէս տպաւորած էր զիս. **Դուրսը քահանայ, ներսը սատանայ**: Ռաֆֆի հոգեւորականները շատ չի սիրեր, մանաւանդ այն հոգեւորականները, որոնք չեն արդարացներ իրենց սքեմը: Բայց միայն հոգեւորականներն ու համար է այդ ասացուածքը: Կեանքի փորձառութիւնը ցոյց կու տայ որ աշխարհի վրայ մեծ, շատ մեծ է թիւր այն աշխարհականներուն ալ, որոնք դուրսէն բարի ու ազնիւ դէմք մը ունին, սակայն ներսէն կը պարտկեն չար ու տգեղ դիմագծութիւն մը:

Մօտաւորապէս քսանըհինգ տարի առաջ գործի կեանքիս մէջ պարտաւորուեցայ եօթը տարի աշխատիլ գործընկերոջ մը հետ, որ աշխարհի ամէնէն քաղաքավար ու բարեկիրթ մարդն էր: Հրապարակի վրայ երկուքս ալ գործ ունէինք քանի մը հարիւր յաճախորդներու հետ եւ բոլոր այդ յաճախորդները կը հմայուէին գործակից ընկերոջս մեղրածորան լեզուէն ու բարեկիրթ շարժումներէն: Ազնուամեծար էր ու ծառայասէր, մարդոց վրայ առաջին վայրկեանէն հիանալի տպաւորութիւն կը գործէր, կենցաղավարութեան մէջ ո՛չ մէկը կրնար մրցիլ իրեն հետ: Սակայն իրեն հետ գործակցելէ քանի մը ամիս վերջ անդրադարձայ որ այդ մարդուն ներաշխարհին մէջ ճիւղ մը կը բնակէր: Այդ ներաշխարհին մէջ կար սաստիկ նախանձոտ, չարամիտ ու կասկածամիտ մէկը, որ կը տառապէր ստորակայական բարդոյթներէ: Երբ առանձին էինք, երբ այլեւս ո՛չ մէկը կը լսէր մեզ, այդ բարեկիրթ ու կենցաղավար մարդը կ'անհետանար ու անոր տեղ կը յայտնուէր ուրիշ մը որ կը բանար հայիոյութիւններու ու ծանր լուտանքներու բերան մը, արտայայտելու համար աշխարհի ամէնէն գոեհիկ ու անմիտ մտածումներն ու մեղադրանքները: Կը զարմանայի, կը շշմէի:

Ի վերջոյ վարժուեցայ, որովհետեւ այլեւս չէի տեսներ այդ մարդուն մէջ դուրսի քահանան, այլ կը տեսնէի ներսի սատանան: Եւ որովհետեւ սատանայ մը երկար ժամանակ չի կրնար ինքզինք զսպել քաղաքավարութեան վանդակին մէջ, մեր հրապարակի հարիւրաւոր յաճախորդներն ալ տակաւ սկսան ճանչնալ զինքը: Տարի մը վերջ այլեւս ամէն մարդ զգոյշ էր անոր նրկատմամբ: Ո՛չ ոք այլեւս կը հմայուէր անոր այդ խաբէական արտաքինէն:

Ընկերային կեանքի մէջ ամէնէն վտանգաւոր մարդիկը անոնք են ահաւասիկ: Անոնք, որոնք այսքան հակադիր տեսարան մը կը պարզեն դուրսէն ու ներսէն:

Հոգեբանական գիտութիւնները մեզի կը սորվեցնեն թէ ամէն մարդ առաւել կամ նուազ չափով ունի գաղտնի ներաշխարհ մը, որ դուրսէն տեսանելի չէ: Մարդիկ, հոգեբանական իմաստով, երբեք մօրէ մերկ չեն պտտիր ընկերութեան մէջ, անպայման բանով մը ծածկած են իրենց ներաշխարհը: Աշխարհի ամէնէն բարի ու ազնի մարդն իսկ, այն որ իսկապէս թէ՛ դուրսէն, թէ՛ ներսէն իրական սուրբ մըն է, առաքեալ մը, կրնայ ներաշխարհին մէջ երբեմն ունենալ ապրումներ, մտածումներ, ցանկութիւններ, որոնք այդ առաքեալէն սպասուածները չեն: Բնութիւնը այդպէս ստեղծած է մարդը: Մարդուն ուղեղն ու սիրտը երբեմն կ'ընդունին անկոչ տգեղ մտածումներ ու ցանկութիւններ: Բայց իրական առաքեալը զանոնք կը խեղդէ իր ներաշխարհին մէջ, չ'արտօներ որ անոնք դրսեւորին, լուսարձակուին արտաքին շարժումներու վրայ, այլ խօսքով՝ չ'արտօներ որ այդ յոռի մտածումներն ու ցանկութիւնները կեանքի կոչուին: Եւ ան կը շարունակէ մնալ այն մարդը, որ դուրսէն է այն ինչ որ է ներսէն:

Բայց քիչեր միայն կը յաջողին իրենց ներաշխարհին մէջ խեղդել չարն ու ժխտականը: Ուրիշներ, ուշ կամ կանուխ, կը մատնեն իրենց ներքին սատանան, ուշ կամ կանուխ կ'արտօնեն որ դուրս խոյանայ այդ ներքին սատանան ու սկսի գործել դուրսի շրջապատին վրայ:

Ազնի բարեկամներէս մէկը, որ անցած էր կեանքի դառն փորձառութիւններու բովէն, ինծի շարունակ կ'ըսէր որ չէր սիրեր հանրածանօթ ու յայտնի մարդիկը աւելի մօտէն ճանչնալ, որովհետեւ կը վախնար որ

անոնց մէջէն յանկարծ կը յայտնուէր սատանայ մը որ տակն ու վրայ պիտի ընէր անոնց արտաքին երեւոյթը:

Այդ վտանգը միշտ առկայ է եւ մեր կամքէն ալ անկախ: Աւանդ, մեզ շրջապատող «քահանայ»ներէն շատեր օր մը յանկարծ իրենց մէջէն դուրս պիտի բերեն «սատանայ» մը, որուն գոյութենէն լուր չունէինք: Պիտի հիասթափուինք, պիտի տխրինք: Բայց ոչինչ կրնանք ընել այդ վտանգին արգելք ըլլալու համար: Որովհետեւ բնութիւնը ապակի մը չէ դրած մարդոց արտաքին ու ներքին ապրումներուն միջեւ:

Գնահատելով, եկնոր սիրեմ

Կ'երեւի թէ կեանքը նախապէս ալ այսօրուանէն տարբեր չէր որ մեր պապերը ըսեր են. **Գնահատելով, եկնոր սիրեմ:** Այսօր ժողովրդական ո՛չ մէկ առած այնքան յաճախակի կերպով կը գործածուի մեր իրականութեան մէջ, որքան կը գործածուի այս մէկը: Կը բաւէ որ իր մահկանացուն կնքէ մեր ժողովուրդին առաւել կամ նուազ արժէքաւոր զաւակներէն մէկը եւ անոր համար բաւական փայլուն յուղարկաւորութիւն մը կատարուի, կը բաւէ որ քանի մը մարդիկ քանի մը փայլուն խօսքեր արտասանեն ողբացեալին համար, քանի մը հոգի ալ քանի մը կաթիլ արցունք հոսեցնէ, որպէսզի բոլորս ալ իրարու նայինք, իմաստուն մարդոց նման մեր գլուխը շարժենք եւ ըսենք. **Գնահատելով, եկնոր սիրեմ:**

Ուրկէ՞ ծնունդ կ'առնէ այդ կանոնը: Ինչո՞ւ մէկու մը ողջութեանը չենք ըներ այն ինչ որ սիրով կ'ընենք իր մահուան յաջորդ օրը: Միշտ մտածած եմ այս մասին: Միշտ անմտութիւն գտած եմ մեր այս անհասկնալի վարմունքին մէջ: Ինչո՞ւ մէկու մը երեսին չենք ըսեր, թէ զինքը որքան կը սիրենք, եթէ այդ բանը պիտի ըսենք

իր մահէն վերջ, երբ ան այլեւս պիտի չլսէ: Ինչո՞ւ: Որովհետեւ արդեօք կեղծ է մեր այդ սէրը, իրական չէ եւ ատոր համար է որ իր ողջութեանը համարձակօրէն սէր չենք արտայայտեր իրեն, կամ որովհետեւ մէկու մը մահէն վերջ, հարկ է, նոյնիսկ եթէ կեղծ ըլլայ, փայլուն բաներ ըսել անոր մասին եւ այդ պատճառով է որ կեղծ արցունքներ կը հոսեցնենք եւ սիրոյ կեղծ խօսքեր կ'ընենք: Ինչո՞ւ մէկու մը մահուան կը սպասենք, որպէսզի քիչ մը պատիւ ընենք անոր: Որովհետեւ ամօթ կը նկատենք մէկու մը ողջութեան պատիւ ընել անոր: Կամ արդեօք կը նախանձինք ապրող մրցակիցի մը ընծայուած պատուին եւ այդ պատիւը ւելի վերջ հանգստօրէն կ'ընենք երբ ան կը դադրի այլեւս մրցակից մը ըլլալէ:

Էհ, ով գիտէ որքան բազմաթիւ են այն ազդակները որոնք քով քովի գալով հաստատեր են այս անիրաւ օրէնքը:

Ճիշդ է որ մէկու մը մահը կը յուզէ մեզ: Մեր սրտին մէջ բան մը կը խաղայ այդ անհետացողին նկատմամբ եւ պահանջքը կը զգանք անոր մասին լաւ բաներ մը ըսելու կամ մտածելու: Նոյնը չէինք մտածեր ւելի առաջ: Կը մտածէինք թերեւս: Բայց մենք ընդհանրապէս ողջերը յարգելու մէջ կը թերանանք, կը կարծենք որ միշտ ժամանակ ունինք զանոնք յարգելու: Գրագէտ մը ուրիշ գրագէտի մը մասին գեղեցիկ յուշեր կը գրէ միայն անոր մահէն վերջ: Ինչո՞ւ անոր ողջութեան չի գրեր այդ յուշերը: Թերեւս ամօթ կը նկատենք ապրող մէկու մը մասին յուշեր հրատարակելը: Թերեւս ալ կը կարծենք որ սա ամէնէն հասարակ եւ անշահ յուշը յանկարծ արտասովոր կերպով արժէքաւոր դարձած է ենթակային մահէն վերջ:



Յետոյ անկասկած կը նախանձինք: Իր ողջութեանը գովել մէկը, անոր մասին լաւ բաներ արտայայտել: Ինչհի: Միայն ան է որ արժանի է այդպիսի գովասանքներու: Մենք ալ արժանի չենք գովասանքներու: Եթէ ուրիշը մեզ չի դրուատեր, եթէ ուրիշը մեր մասին լաւ բաներ չ'ըսեր, մենք ինչհի ըսենք ուրիշին մասին: Ահաւասիկ նախանձի ըստ երեւոյթին ամէնէն անմեղ տեսակը, որ իրականութեան մէջ նախանձի բոլոր տեսակներուն չափ վատ է:

Զղջումն ալ իր դերը ունի այս ուշացած յարգանքին մէջ: Երբ մէկը հրաժեշտ կ'առնէ մեզմէ, անպայման խղճի խայթ մը կ'ունենանք անոր նկատմամբ: Մեզմէ մէկը անհրաւութիւն մը ըրած է թերեւս անոր նկատմամբ, մէկը թերեւս պարտք մը ունի, մէկը թերեւս բանով մը թերացած է անոր նկատմամբ, անհրաժեշտ